



ՀԱՅԵՐ ՊԱՏԱՐԱՆ

ՊԱՏԱՐԱՆ

ՊԱՏԱՐԱՆԻ ՏԵՄԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՒԳԻՏՈՒԹԻԱՆ ՏԱՐԱԶՈՒՅ

ՊԱՏԱՐԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻԱՆ

Գ. Պատրիարքական տաճարի տնտեսականության մասին է
կանխիկ դիմագրվել 3 ամսով մեծին :
Պատրիարքական տնտեսականության մասին տնտես-
նական վարչության 1 ամսով մեծին :
Իտալական տնտեսականության մասին 2 ամսով :

ԿԱՐԴԻՆԱԼ

ՍԵԼԵՐՈՆ ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ

— Գ. Գ. Գ. Գ. Գ. —

ԳԱՐԱՆՈՒ ՉԵԼԻ

ԱՄԵՆ ՏԵՄԱԿԱՆ ԶԵՒԳԻՏՈՒՅ

ՊԱՏԱՐԱՆԻ ԶԱՆԶԱՐԱՐՈՒԹԻԱՆ

Հանդիսի տնտեսականության մասին է կանխիկ դիմագրվել 3 ամսով մեծին :
Առ Գ. Պատրիարքական տնտեսականության մասին է կանխիկ դիմագրվել 3 ամսով մեծին :
Առ Գ. Պատրիարքական տնտեսականության մասին է կանխիկ դիմագրվել 3 ամսով մեծին :

Ա. ՏԱՐԱՆ

1881 ՄԱՅԻՍ

ԹԻՒՅ

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԶԵՒԳԻՏՈՒԹԻԱՆ

ՄԱՍՆ Ա.

ԶԱՓԱԿԱՆ ԳՐՈՒԹԻԱՆ

ԴԱՍ Բ.

ԵԶԱՆԱԿԱՆ ԶԱՓԱԿՈՒԹԻԱՆ

Հետևեալ երևում է, որ ներկայացված 7 պատկերը որ
պէս դասին տնտեսականության է, ուստի ուսանողը պարտին իւ-
րաւորութիւնը չափի կարգին ու ձեւը նայն պատկերաց պայ-
մաններով, եւ նայն ձեւով պէտք է չափել, յետագայ թայտո-
րութիւնն ալ ի մտի ունենալ :

Թէպէտ օտն դասին մի փոքր մասը 1⁰ թուով առած
էինք, բայց նա միայն նշանակարանական եղանակը բա-
ցատրեալու համար գրուած էր : Այժմ կը ներկայենք չափուց
ամբողջ ցուցանիս :

ՀԱՅԱՍՏԱՆ. — Պէտք է պատշաճ որ ելծէ առնուելիք չա-
փերն Ամառնի համար է՝ պէտք է ներքնադիտութեամբ վրա-
յէն չափել, իսկ ելծէ ՄԵԼԻՆՈՅ, ԹԻԼԻՍՈՅ եւ այլն զգետ-
ներու համար պէս առնին ու Ամառնին վրայէն պէտք է չա-
փել :

ՅՈՒՑԱԿԱՆ ԶԱՓՈՒՅ

Կարծի կէս մեծութեամբ 48 հարիւրդրամեղի
համեմատութեամբ :

ԹԻՒՅ


Հարիւրդրամեղ

1	Ծածրակէն սկսելով երբեք առնին զայն տա- նելու է մինչեւ անտի ստակը գրուած քանակին վերջ ելլելու է. նշանակեալ կէտին վրայ, որ ա- նտի իւրաւորութիւնը կը հաստատուի, (Տես պատ- կեր 1 ⁰) որչա՞ք չափին երկայնութիւնն է	30
2	Առանց չափը առնել թողլոյ, բազմին ուղղու- թեամբ իջնելու է մինչեւ ի անակուշտ, Բ. կէ- տին վրայ, (այս չափը երանի երկայնութիւնը կը ըզննէ) որ է	30
3	Ծածրակէն սկսելով կոճակէլէն իջնելու է մին- չեւ յետաւորութեամբ գրուած միջնակէտին, Զ. նշանակեալ կէտին վրայ, (Տես պատկեր 2 ⁰)	38
4	Առանց չափը առնել թողլոյ դասակի երկայ- նութիւնը չափելու է, (Այս կէտը իւրաւորութե- ան համեմատութեամբ համեմատութե- ան մի քանի հարիւրդրամեղի վար կը գտնուի : Ճիշդ տեղն գտնելու համար, ով ձեւաց թիւ- ման մէջի ամենէն փոքր ելած տեղն հարկով կարելի է որոշել, ծածրակէն մինչեւ դասակի երկայնութիւն) որ է	44
5	Միշտ առանց չափը առնել թողլոյ պէտք է իջնել մինչեւ զգետին երկայնութիւնը, (որչա՞ք որ պահանջուի) որչա՞ք չափն է	75
6	Ծածրակէն սկսելով ուսին վրայէն անցնելու է անտի ստակէն առնելով տանելու է մինչ ի յետ-	

Թիւ	Հարկերգամեր
7	ստիպումն դատելայրի միջնակէտին վրայ, (Տես պատկեր 3°.) որոյ երկայնութիւնն է 64
7	Ծոծրակէն սկսելով քամակի վրայէն տանելու է մինչև թիկնանկին, Գ. կէտին վրայ. (Տես պատկեր 3°.) որ է 22
7 և 8	Առանց չափը տեղէն թողլոյ տանելու է գէպի տիքույոգ, Գ. կէտին վրայ, որոյ չափն է 24
8	Կռնամէջէն սկսելով անուրի յառաջաձգուած թիւնն առնելու է, (ծղին բնական վիճակի մէջ ձգուած ատեն առաջակողմն անցնելու և անուրի տակէն տեւտուած վերջին թիւնն առնելու է) որ է 27
9	Առանց չափը տեղէն թողլոյ տիքույոգին վրայէն դարձնելով մինչև թիկնանկեան կէտին տանելու է, որ է Գ. կէտ (Տես պատկեր 4°) որ կ'երևայ այս չափին գործողութիւնն, բայց ինչպէս բռնեք այն երկու չափերն առնուած ատեն ծղին բնական վիճակի մէջ ձգուած ըլլալու է) որ է 52
10	Ծոծրակէն սկսելով աւան վրայէն թիկնելու է մինչև կրծքաքիւղին (գօտէ) վերի եզրն. Սոյն չափը կը ցուցնէ գօտույն բացուածքներուն վերի ծայրի հաւասարութիւնն.) որ է 39
11	Առանց չափը թողլոյ կուրծքի մէջտեղէն իջնելու է առաջակողմն գօտույն վարի եզրն, (Տես պատկեր 5°.) այն չափին երկայնութիւնն է 49
12	Յետակողմն կենտրոն թիկնամիջոցէն մինչ ի թիկնանկին, թիկնանկէն լայնութիւնն չափելու է, (Տես պատկեր 6°.) որոյ չափն է (*) 48
13	Զորքող պատկերին հետեւելով չափառութիւնն ու բազուկն ուսին հաւասարութեամբ, ուղղանկիւն մը կազմելու վերջ, թիկնամիջոցէն մինչ ի արմուկն չափելու է, որոյ երկայնութիւնն է 47
14	Առանց չափը թողլոյ մինչ ի գօտուակ չափելու է, որ թիկնանկէն լայնութիւնն ալ մեկտեղ թուելով թիկնանկէն երկայնութիւնը կ'առնանմը, որ է 74
15	Անուրի չափին մեծութիւնն առնելու է, մէկը տիքույոգին վրայ միմեանց կցելով, և գիտնելու է որ մէկըն անուրի տակ փոթ փոթած չ'ըլլայ, (Տես պատկեր 5°.) որ է 40
16	Բռնանկէն լայնութիւնն 24 (Տես պատկեր 5°.) որոյ կէտն է (**) 42
17	ԿՈՐԾԻՒ ՄԵԾՈՒԹԻՒՆԵՆ անուրիներէն վանդակի շրջապատին մեծութիւնն չափելու է որ է 96, (Տես պատկեր 5°. և 7°.) որոյ կէտն է 48
18	Մէջքը կազուած գօտին հանելէ վերջ,) գօտուակը մեծութիւնն չափելու է, որ է 64, (Տես նոյն պատկերներ.) որոյ կէտն է 32
19	Յետոյ առնելու է կոնքի շրջապատին մեծութիւնն, (Այս չափը առնելու համար պէտք ծղեքը բնական վիճակի մէջ թողուլ և բազկաց ազդերուն հոգած տեղը համարել կոնքի շրջապատին հաւասարութեան վայրը.) (Տես նոյն պատկերներն.) Այս չափին մեծութիւնն է 104, որոյ կէտն. 52
20	Լանջի լայնութեան չափն. Այլ երբուժաւորն մինչև ձախն երթալով, (Տես պատկեր 6°.) որ է 40 և որոյ կէտն է. 20
24	Պարանոցի չափն մեծութիւնն, անրակի վրայէն անցնելով հաղաղին վրայ միայնելու է, (Տես պատկեր 6°.) որ է 38, և որոյ կէտն կ'է 19

(*) Մինչև 25 հարկերգամեր մեծութիւնն ունեցող չափերուն կէտերը կը զրուին, զորքիսուկ 14 1/2, 19 1/2, 22 1/2 և այլն :
(**) 16 և մինչև 21 Թիւ չափերուն մեծութիւնն միշտ կ'է գրեւոր է ինչպէս կը տեսնուի բոլոր այս հաստաւոր մէջ :

ԴԻՏ. — Վերոգրեալ 24 թիւ մարմնադնական չափերն իւրեանց կարգաւ բերանացի գիտնալ պէտք է :



ԿՈՏՈՐԱԿ

Կոտրծի կէս մեծութեան 48 հարկերգամերի
(որ է 17°. չափն.)
ԲԱԺԱՆԵԱԼ ՈՒԹ ՄԱՍԱՆՑ
48 ին 1/2 Ը (մէկ երկրորդն) կ'ընէ 24
48 ին 1/3 Ը (մէկ երրորդն) կ'ընէ 16
48 ին 1/4 Ը (մէկ չորրորդն) կ'ընէ 12
48 ին 1/6 Ը (մէկ վեցերորդն) կ'ընէ 8
48 ին 1/8 Ը (մէկ ութերորդն) կ'ընէ 6
48 ին 1/12 Ը (մէկ երկուստասներորդն) կ'ընէ. 4
48 ին 1/16 Ը (մէկ վեցասաններորդն) կ'ընէ. 3
48 ին 1/21 Ը (մէկ քսանչորրորդն) կ'ընէ. 2

ԾԱՆ. — Ձեռագիրութիւնը կը պահանջէ որ միշտ կուրծքի կէս մեծութեան չափը 8 մասանց բաժնուի, որոյ իւրաքանչիւրն պիտի գործածուի իրենց մասնաւոր տեղն ձեռագիրութեան մէջ և զոր պիտի բացատրենք ժամանակին. միայն հարկ է այժմէն բերանացի ուսանիլ վերոյիշեալ կոտորակը :

Բացատրութիւն պատկերաց

Պատկեր առաջին

Պատկեր երկրորդ

ՄԱՆԿԱՄԱՐԻ ԿՆՈՋ ԻՐԱՆԱԽՈՐ ՇՐՋԱԶԳԵՍ

Պատկերն առաջակողմը կը ներկայէ :

Սոյն շրջագրեալը պէտք է շինել մութ գոյն մետաքսաւոր կամ բարակ բրդեղէն կերպասէ, իւրաքանչիւր մասերն համապոյն են բաց չ'ընող զարդէն՝ որ խիստ բայց գոյն մետաքսեղէն է :
Իրանն 5—6 հարկերգամէզը հազիւ գօտույն հաւասարութիւնը կ'անցնի : Կուրծքն ուղղաձիգ կ'ոճկուած է և պարանոցը խիստ լայն փուռած օձիք մը կը ստատէ, որ մինչև թիկնաց հաւասարութիւնն իջնելով քառանկիւն մը կը ձեւացնէ. (Տես պատկեր 1-ին երկրորդ որ այն զգեստին յետակողմը կը ներկայէ) և այս օձիքին շրջանակաձեւ բացուած գծին եզրէն 5 հարկերգամէզը հետի 5 կարգ խիտուողիկ քաշուած է, և զարդի կերպասէն 6 հարկերգամէզը լայնութեամբ շերտաձեւ կորուած մասերով վարդակալ մը կը կազմեն լանջին դէմ, և մնացեալ ծայրերն մինչև գօտեփայր կ'իջնեն :
Թեւե զատուակի հաւասարութեան 10 հարկերգամէզը կ'աճ է, նոյն կերպասէն խիտուողիկ մը և ատոր գաղաթը շերտ մը պատած է այն շերտին ծայրերն փոքր վարդակալ մը կը ձեւացնեն արմուկի կարին դէմ :
Պարանոցն ու թեւանոցը բազմաձալ թանթիւով զարդարուած են :
Արտաքին քղանցքն կազմելու համար պատկերաց ձեւին հետեւելու է :
Ներքնաքղանցքն դեռնի հաւասարութեամբ է. 55 հարկերգամէզը բարձրութեամբ բազմաձալ, խիտուողիկ և զարդի կերպասով յօրինուած :
Օրինակն տես ի տախտակ Ա. երես, 7 և մինչև 15 թիւերն բնական մեծութեամբ, 14. փոքրազիւր ձեւերն, 15. Արտաքին քղանցքին կէս փոքրազիւր ձեւն և 16. թիւն յետակողմն ուսուցիկի մասերն :

Պատկեր երրորդ

ՄԱՆԿԱՄԱՐԻ ԿՆՈՋ ՇՐՋԱԳԱՅՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԶԳԵՍ

Պատկերն առաջակողմը կը ներկայէ :

Սոյն հագուստի իրանն և ներքնաքղանցքը համապոյն գծաւոր բրդեղէն կերպասով շինուած են, իսկ արտաքին քղանցքն սեւ սնդուս է :
Իրանին առաջամասն շրջակի կարուած է՝ ուղնաորէն մինչև ստորոտն, և ատոր տեղն մնաւորէն կամ լիթիւնիկ կերպաս մը դրուած է. 5 հարկերգամէզը լայնութեամբ նոյր թանթիկէ բազմաձալ մը կցուած է իրանին կրծաշրջանին և այս գծին ներքեւ կարուած է մնաւորէն կերպաս, նաեւ իրանի կերպասէն չորս մասնիկ պարարտուած է որոյ առաջինը կրծաշրջանին վերի եզրի հաւասարութեան սկսած է և միւսներն ալ զուգադիր շարուած են մինչև ստորոտն, իւր թէ ատոր ծարմանդած (շաք-բաշ) ըլլային իրանն :
20 հարկերգամէզը լայնութեամբ օձիք մը փուռած է ուսն, ըստ հաճոյից նորահիւս թանթիկէ, պարանոցն բազմաձալ թանթիկով զարդարուած է, նաեւ թեւին հանդիմանին ու թեւանոցներ :
Ներքնաքղանցքն դեռնի հաւասար է և այս հաւասարութեան 20—25 հարկերգամէզը բարձրէն փոթ փոթուած է ամբողջ շրջապատն և դարձնալ այս հաւասարութեան 15-ական հարկերգամէզը միմիկէ բարձրութեամբ, 4 ական կարգ փոթ ուսուցիկ քաշուած են և ատոր մէջտեղերը բնական վիճակի մէջ թողուած է :
Արտաքին քղանցքն երեք մասեր կը բաղկանայ և ձախ կողմի առաջակողմն վրայ 5 խոշոր օղակներով և նոյն մեծութեամբ բաժնուած կ'ոճկուած կը ներկայացնէ, (այս պատկերին յետակողմը տես ի տախտակ Բ. երես, 46 թիւ պատկերն որ փոքր ի շտապ գաղափար մը կ'ընծայէ) :
Օրինակն տես ի տախտակ Ա. երես 27 և մինչև 34 թիւերն բնական մեծութեամբ : Ասոր փոքրազիւր ձեւն տես թիւ 55 :

Պատկեր յորրորդ

ԶԱՓԱՀԱՍ ԿՆՈՋ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԱԻՈՐ ԿԱԶՄ

Պատկերն յեռասկողմը կը ներկայէ:

Սոյն իրանաւոր կազմն կը շինուի թեթեւ եւ բարակ բրդեղէն գծաւոր կերպով եւ կամ զանազան տեսակ սեւ մետաքսեղէններէ, զարդերն իւրօրինակ խանթուքով յորինուած են:

Իրանի երկայնութիւնն 10—15 հարիւրորդամէջը հազիւ գօտեւայրը կ'անցնի, եւ առաջակողմն հասու ձեւով կը վերջանայ, իսկ յետամասն 50 հարիւրորդամէջը երկայն է քան զմիւս մասերն եւ վար ինկած ծայրն լեզուի ձեւ մը կը ներկայէ, այնպէս որ երկու կողմի սոյն մասերն իրանի երկայնութեան հաւասարութենէն սկսելով բացուածք մը կը ձեւացնեն, եւ ասոր զաւգաթն միջակ լայնութեամբ մետաքսեայ շերտէ վարդակալ մը կը յանգի:

Ուսին ասեղնադործ զարդն նոյն ձեւով հասած է առաջակողմն եւ լանջին վրայ վարդակալ մ'եւս կայ: Կուրծքն ուղղաձիք կոճկուած է մինչեւ իրանատուն: Պարանոցն ուղիղ օձիք մը կը պատէ եւ եզրն թանթելով զարդարուած է:

Ներքնաքլանցքն մինչեւ գետին կը հասնի եւ երկու կարգ նեղ բազմաձաւ պատած են առաջամասին վրայ: Նաեւս հոս կը ներկայանայ երեք մասէ բաղկացեալ, գոլնոցի ձեւ պարեգօտ մը որոնք միմեանց վրայ ձգուած կը ներկայանան եւ որոց շուրթն վերջոյրեալ զարդէն չըջապատուած են:

Յետասկողման ուռուցիկին եւ ներքնաքլանցին ձեւը պատկերն ինքնին կը ներկայէ:

Իրանին օրինակն տես ի տախտակ Բ. երես, 47էն մինչեւ 52 թիւ մասերն բնական մեծութեամբ: 55 թիւն փոքրադիր ձեւը եւ 54 պատկերն որ սոյն կազմին առաջակողմը կը ներկայացնէ:

Պատկեր հինգերորդ

ԵՐԿԱՅՆ ԱՄԱԶՈՆԱԻՈՐ ԿԱԶՄ

Պատկերն յեռասկողմը կը ներկայէ:

Սոյն կազմը յորինուած է սնդուսանման մուր կապոյտ կերպով եւ շուրջն զարդարուած է սպիտակ թանթելով:

Խիստ երկայն ամազոն մը, որոյ առաջակողմն շուրթերն 6—7 հարիւրորդամէջը հէռուէն թանթելներ կ'իջնեն մինչ ի քլանցեղրն, եւ ասոնց միջնալայրէն խառնադոյն գալտակուրէ կըր կոճակներով կոճկուած է:

Օձիքն լայն քառակուսի մը կը ձեւանայ եւ առաջակողման թանթելին կը միանայ:

Կողանջատի կարին վրայ դրուած է՝ գրպանն եւ բերանը մասնիկով մը փակուած: սոյն կարին վեր զարդ մը դրուած է, որ կարծես բացուածք մը կը ձեւացնէ:

Յետամասը կարճ կտրուած եւ երկայն քառակուսի մաս մը երեք լայն բազմաձաւ կտրուածքով նորա կցուած է, եւ սոյն բազմաձաւերուն ծայրերն առկալս վար կ'իջնան, հոս զետեղուած է նաեւ շերտէ վարդակալ մը:

Քլանցքին ուռուցիկն 160 հարիւրորդամէջը լայնութեամբ մաս մ'է որոյ զաւգաթն լայն բազմաձաւով ամփոփուած է: առաջակողմն ալ երկու կախուած պարեգօտի նման քլանցներ կան որոնք եւս բազմաձաւ կտրուած են:

Գլխարկը փախթ է:

Այս ամազոնին օրինակն տես ի տախտակ Բ. երես, 55 էն մինչեւ 57 թիւերն բնական մեծութեամբ, 58 փոքրադիր ձեւն եւ 59 օրինակն որ յետամասի բազմաձաւցու քլանցքն է:

Պատկեր վեցերորդ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԴՆՈՅ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՄԱԶՈՆԱԻՈՐ ԿԱԶՄ

Պատկերն առաջակողմը կը ներկայէ:

Սոյն ամազոնաւոր կազմը զանազան կերպարաններէ կրնայ շինուիլ: Ամազոնին երկայնութիւնը դաստակի հաւասարութեամբն է: Օձիքը հազուադէպ ալ մաս մը կը չըջէ եւ 6 հարիւրորդամէջը լայնութեամբ ունջեր կը ձեւացնեն, Մուրթ գոյն թաւիչով ծածկուած է թեւին հանդրիճակն, քլանցեղրն եւ օձիքը:

Յետասկողմը թիկնոցակի նման է, բացատրութիւնն տես ի տախտակ:

Ներքնաքլանցքն կրկնակի են եւ ուղղաձիք բազմաձաւ կը ձեւացնեն, հակառակ դիրքն ունի նաեւ պարեգօտն, եւ որոց շուրթը 6—7 հարիւրորդամէջը լայնութեամբ թաւիչով զարդարուած է:

Օրինակն տես ի տախտակ Ա. երես, 17 էն մինչեւ 22 թիւ մասերն բնական մեծութեամբ, 25 փոքրադիր ձեւն, 24, 25 քլանցին ձեւեր եւ 26 թիւ պատկերը որ սոյն Ամազոնին յետամասը կը ներկայէ:

Պատկեր եօթներորդ

Այս պատկերն երկրորդ պատկերին յետասկողմը կը ներկայէ ուր տուինք բացատրութիւնն:

Պատկեր ութերորդ

10—12 ՏԱՐԵԿԱՆ ՕՐԻՈՐԴԻ ԹԻԿՆՈՑԱԿ-ԿՐԿՆՈՑ

Պատկերն յեռասկողմը կը ներկայէ:

Այս հագուստը կը շինուի բարակ ասուեղէն կամ բրդեղէն կերպով, որոյ գոյնը իւրաքանչիւրին ճաշակին կը թողուի:

Առաջամասն ու կողմասը միակտոր է, միայն անուրթի տակէն բացուածք մը շինուած է որ մինչեւ գրպանն կը հասնի: Կուրծքն ուղղաձիք կոճկուած է հազադէն մինչ ի քլանցեղրն, 15 միջակ մեծութեամբ ոսկրէ կոճակներով: Տես առաջակողմն ի տախտակ Ա. երես, պատկեր թիւ 6:

Պարանոցն, թեւի հանդրիճակն եւ գրպանն, զարդի վայելուչ կերպով մը վրայ փոթուռուցիկ կը կազմեն, իւրեանց պէտք եղած լայնութեան չափ:

Յետամասը միակտոր է մինչեւ թիկանց հաւասարութեան դէմ եւ այս գիծէն վեր թիկնամաս մը յատկացած է որ ստորին մասը իր վրայ փոթփոթուած է: Գօտեւայրին դէմ 4 կարգ փոթուռուցիկ կը ներկայեն, յետամասի լայնութիւնն ամփոփելով եւ ասոր անկիւններէն 5 հարիւրորդամէջը լայնութեամբ նոյն կերպով են երկու մասէ բաղկացեալ գօտի մը կցուած է երկու կողմէն մէկ մէկ կոճակներով: Հազուադէպ շուրջն եւ բոլոր կարերուն վրայ 1 հարիւրորդամէջը լայնութեամբ կիցկարով զարդարուած է:

Գլխարկն փախթ է եւ գանկի շուրջն 5 հարիւրորդամէջը լայնութեամբ մետաքսեայ շերտ մը պատած է եւ որոյ ծայրերն ձախակողմն վարդակալ մը կը կազմեն:

Տես օրինակն ի տախտակ Ա. երես, բնական մեծութեամբ 1էն մինչեւ 4 օրինակներն, եւ քոմլտի դրուած 5 թիւ փոքրադիր ձեւն եւ 6 պատկերն որ սոյն թիկնոցակ-կրկնոցին առաջակողմը կը ներկայէ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հանդիսիս խմբագիրն պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան քէ պատրաստ է (բաց ի երկուսարքի օրերէ) այցելութեամբ ձեւագիծութեան դասեր աւանդել քէ ազգային աղջկանց վարժարանաց եւ քէ մասնաւորաց անց մէջ գոհացուցիչ պայմաններով:

Դասաւորութեան ցանկացող ազգային պէտք է դիմեն Մահմուտ փաշա, Թարագնրար փողոց թիւ 112 դերձակ Մ. Գալէնէրեանի խանութը՝ ուր կը պատրաստուին ամէն տեսակ զգեստներ արանց եւ տղայոց համար չափաւոր գիններով:

ՀՐԱՏԱՐԱՅԻԶՔ

Վ. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Գ. ՊԱՆՏՍԼԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Զաւգադնրար Եօզուու, Յակոբեան խան, թիւ 13

Կ. ՊՈԼԻՍ



